ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2796-րդ տարեդարձի առթիվ, գիտական, մանկավարժական, հասարակական նշանակալի գործունեություն ծավալելու, բազմամյա վաստակի և անմնացորդ աշխատանքի համար պրոֆեսոր, բնապահպան, «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի նախագահ Կարինե Սուրենի Դանիելյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կարինե Սուրենի Դանիելյանը ծնվել է 1947 թվականի հունիսի 9-ին, Երևանում:

1970 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժինը:

1971-1974 թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ ասպիրանտուրայում:

1975 թ.-ին Կ.Դանիելյանին շնորհվել է կենսաբանական գիտությունների թեկնածուի կոչում:

1976-1980 թթ. եղել է ԳԱԱ էքսպերիմենտալ կենսաբանության ինստիտուտի կրտսեր գիտական աշխատող:

1980-1985 թթ. եղել է ԳԱԱ կենսոլորտի հիմնախնդիրների գիտական խորհրդի գիտական քարտուղար:

1985-1990 թթ. եղել է ՀԽՀ Կառավարությանն առընթեր Գիտատեխնիկական ինֆորմացիայի ինստիտուտի վարչության պետ:

1990-1991 թթ. Կ. Դանիելյանը նշանակվել է Երևան քաղաքի փոխքաղաքապետ՝ բնապահպանության և առողջապահության գծով, իսկ 1991-1994 թթ.-ին՝ ՀՀ բնապահպանության նախարար:

1994-1996թթ.-ին եղել է ԵՊՀ դոկտորանտ:

1996 թվականին Կ. Դանիելյանին շնորհվել է ԵՊՀ դոցենտի կոչում: Նույն թվականից հանդիսանում է «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի նախագահը:

1998 թ.-ից՝ Միջազգային էկոլոգիական ակադեմիայի իսկական անդամ:

1999 թ.-ին շնորհվել է աշխարհագրական գիտությունների դոկտորի կոչում:

2009 թվականից առ այսօր Կ. Դանիելյանը հանդիսանում է ՀՀ Նախագահին առընթեր Հանրային խորհրդի անդամ:

2009 թվականից հանդիսանում է ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնախնդիրների հանձնաժողովի անդամ:

2010 թվականին Կարինե Սուրենի Դանիելյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

2012 թվականին Կ.Դանիելյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

Պրոֆեսոր Կ.Դանիելյանը հեղինակել է շուրջ 270 գիտական հոդվածներ և մենագրություններ:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով պրոֆեսոր Կ.Դանիելյանի բազմամյա վաստակը, գիտության բնագավառում ներդրած նշանակալի ավանդը, ինչպես նաև

հասարակական և մանկավարժական մեծ գործունեությունը, առաջարկվում է Կարինե Սուրենի Դանիելյանի շնորհել «Երևան քաղաքի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կարինե Սուրենի Դանիելյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կարինե Սուրենի Դանիելյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ եվ/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ